# ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (12.09.2022թ.-15.12.2022թ.) ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ (16.12.2022թ.-23.12.2022թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման չորրորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2022 թվականի սեպտեմբերի 12-ին և ավարտվել դեկտեմբերի 15-ին:

Գումարվել է՝

- 5 հերթական,

- 6 արտահերթ նիստ՝ հոկտեմբերի 6-ին, հոկտեմբերի 7-ին, նոյեմբերի 24-ին, դեկտեմբերի 2-ին, դեկտեմբերի 9-ին, դեկտեմբերի 14-ին:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 3 արտահերթ նստաշրջան՝ դեկտեմբերի 16-ին, դեկտեմբերի 20-ին, դեկտեմբերի 23-ին:

Ազգային ժողովն ընդունել է 286 օրենք, որից՝

- 7-ը «մայր» օրենքներ են՝ («Սերմերի և տնկանյութի մասին», «Մաքսային կարգավորման մասին», «Զենքի շրջանառության կարգավորման մասին», «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» և «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին», «Պետական գույքի

մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2021 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» և «**Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին**»):

- 263՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,
- 16՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 245-ի հեղինակը Կառավարությունն է, 41-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 21-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը, 8-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 52-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 108-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 11-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 16-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 54-ինը՝ Տնտեսական հարցերի

մշտական հանձնաժողովը և 9-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

**Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝**

- **ընտրել է՝**

- Սահմանադրական դատարանի 2 դատավոր (Սեդա Սաֆարյան, Հովակիմ Հովակիմյան),
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ (Տիգրան Հակոբյան),
- Բարձրագույն դատական խորհրդի 3 անդամ (Կարեն Անդրեասյան, Երանուհի Թումանյանց, Հայկ Գրիգորյան),
- Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորի թեկնածու (Արման Թովմասյան),
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածու (Դավիթ Վեքիլյան),
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորի թեկնածու (Արման Կուրեխյան),
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (Արմեն Նուրբեկյան),
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամ (Նարեկ Ղազարյան),

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ (Վահագն Հովակիմյան),
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 6 անդամ (Աննա Գրիգորյան, Ժիրայր Կարապետյան, Նունե Հովհաննիսյան, Սիլվա Մարկոսյան, Արմեն Սմբատյան և Արուսյակ Տերչանյան):

- **ընդունել է հետևյալ հայտարարությունները՝**

- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը Ադրբեջանի զինված հարձակման վերաբերյալ,
- Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամ հարուցելու մասին,